

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆԴՐԱԶԳԱՅԻՆ. ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դավիթ Ղարիբյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ներածություն

Ժամանակակից շուկայական հարաբերությունների և դրանց զարգացման միտումների պայմաններում միջազգային մասնավոր հարաբերությունները և դրանց իրավակարգավորումը առանձնակի կարևորություն են ձեռք բերում, մեծանում են միջազգային մասնավոր շրջանառության ծավալները, զուգահեռաբար աճում է նաև այդ հարաբերություններից բխող վեճերի կամ այլ գործընթացների թիվը: Մասնավորապես ավելանում են օտարերկրյա տարրով ծանրաբեռնված դատական վեճերի թիվը, օտարերկրյա արբիտրաժային վճիռների կամ դատական ակտերի ճանաչման դեպքերը և այլն: Հայաստանի պարագայում նման աճող դինամիկան կարելի է նկատել նաև datalex.am հարթակի միջոցով իրականացված ուսումնասիրությունից, ըստ որի՝ 2020 թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ մուտքագրվել է օտարերկրյա դատական ակտերի կամ արբիտրաժային վճիռների ճանաչման վերաբերյալ 12 դիմում, 2021 թ.՝ 11 դիմում, 2022 թ.՝ 30 դիմում: Նման պայմաններում առանձնակի կարևորվում է հանրային կարգի մասին վերապահման ինստիտուտի դերը, որը անհրաժեշտ գործիք է պետական դատարանների համար՝ թույլ չտալու տվյալ պետության հասարակության կողմից անընդունելի իրավակարգավորումների ներդրումը տվյալ իրավակարգ:

Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է թվում բավարար ուսումնասիրության առարկա դարձնել հանրային կարգի մասին վերապահման ինստիտուտը՝ անդրադառնալով դրա տարբեր դրսևորումներին և առանձնահատկություններին, ինչը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ դատարանների կողմից հանրային կարգի մասին վերապահման անդրադառնալիս և այն կիրառելիս: Ընդ որում, նշված անհրաժեշտությունը առավել վառ ընդգծվում է, երբ նկատի ենք ունենում, որ հանրային կարգի մասին վերապահման կիրառելիությունը սահմանող իրավակարգավորումները սովորաբար դատարաններին ընծեռում են մեկնաբանության և հայեցողության մեծ հնարավորություն: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի¹ (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգրք) 1258-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքին համապատասխան կիրառվելիք օտարերկրյա իրավունքի նորմը չի կիրառվում, եթե դրա կիրառման հետևանքներն ակնհայտ հակասում են Հայաստանի իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին): Նմանօրինակ հիմքով դատարանը կարող է նաև չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը² կամ մերժել օտարերկրյա դատական ակտի ճանաչումը¹: Ավելին,

¹ 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրք:

² «Առևտրային արբիտրաժի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-55-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետը:

նույնանման են նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած իրավասությունների սահմանները. օրինակ՝ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին 1958 թվականի Նյու Յորքի կոնվենցիայի² (այսուհետ՝ Նյու Յորքի կոնվենցիա) 5-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ արբիտրաժային որոշման ճանաչումը և կատարումը կարող է մերժվել նաև, եթե երկրի իրավասու իշխանությունը, որում հայցվում են ճանաչումը և կատարումը, գտնի, որ այդ որոշման ճանաչումը և կատարումը հակասում են այդ երկրի *հանրային (թարգմանությունը մերձ է) կարգին*: Ընդ որում, այս կարգավորումը նույնն է աշխարհի 172 երկրների համար, որոնք միացել են կոնվենցիային³: Հետևաբար, նշված յուրաքանչյուր դեպքում դատարանների առջև խնդիր է դրվում հասկանալ և մեկնաբանել հանրային կարգը, ճիշտ որոշել դրա կիրառման սահմանները, վերջապես տարբերակել հանրային կարգին հակասությունը սովորական իրավական նորմերին հակասություններից և ճիշտ գնահատական տալ այն հարցադրմանը, թե ինչն է հանրային կարգ, իսկ ինչը՝ ոչ:

Այս լույսի ներքո սույն աշխատանքում նպատակ է հետապնդվում քննարկել հանրային կարգի մասին վերապահման իրավական կառուցակարգի դասակարգումը՝ ըստ տարածքային հատկանիշի կամ կիրառելիության սահմանների, այն է՝ դրա, այսպես կոչված, ազգային, միջազգային և անդրազգային տեսակները: Նշված նպատակի համատեքստում մեր առջև դրված խնդիրներն են ամփոփ կերպով պարզաբանել հանրային կարգի մասին վերապահման նշված տեսակները՝ բխեցնելով եզրակացություններ դրանց տեսական նշանակության և գործնականում կիրառման սահմանների վերաբերյալ: Այս նպատակով աշխատանքի 1-ին պարագրաֆում հակիրճ ակնարկ կկատարվի հանրային կարգի մասին վերապահման նշանակությանը, 2-րդ պարագրաֆում անդրադարձ կկատարվի դրա ազգային և միջազգային տեսակներին, իսկ 3-րդ պարագրաֆում կքննարկվի դրա անդրազգային տեսակը՝ որպես համեմատաբար նոր տեսություն՝ ամփոփելով աշխատանքը կատարված եզրակացություններով:

Հոդվածում կիրառվել են իրավունքի լուսաբանման և պարզաբանման ընդհանուր մեթոդները, հատկապես՝ պատմական, լեզվաբանական, հատուկ- իրավաբանական, համակարգային, տրամաբանական և գործառնության մեթոդները:

1. Հանրային կարգի մասին վերապահման նշանակությունը

Այն, որ միջազգային առևտուրը և ընդհանրապես միջազգային մասնավոր հարաբերությունները ներկայումս զարգացման բարձր մակարդակի վրա են, կարծում ենք, ակնհայտ է: Ի տարբերություն միջնադարի, երբ միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ տարբեր տեսությունները դեռ նոր էին ձևավորվում, իսկ միջազգային մասնավոր հարաբերությունները սահմանափակ էին, արդի իրողություններում դժվար է պատկերացնել որևէ անձի, ով այս կամ այն չափով չի առնչվել միջազգային մասնավոր հարաբերություններին, չի եղել այդպիսի իրավահարաբերության սուբյեկտ: Օրինակ՝ հիմա յուրաքանչյուրը իր համակարգի միջոցով կարող է մտնել առևտրային հարաբերությունների մեջ այլ պետության տարածքում գործունեություն իրականացնող վաճառողի հետ, կամ թեկուզ միայն որևէ էլեկտրոնային հարթակում գրանցվելով և համաձայնելով դրա պայմաններին՝ անձը մասնավոր հարաբերությունների մեջ է մտնում մեկ այլ երկրում հաստատված ծառայություններ մատուցողի հետ:

¹ 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

² Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77867> հղումով, 25.11.2023թ. դրությամբ:

³ Տե՛ս <https://www.newyorkconvention.org/countries> հղումով, 25.11.2023թ. դրությամբ:

Հետևաբար, միջազգային մասնավոր հարաբերությունները ներխուժում են յուրաքանչյուրիս առօրյա, իսկ միջազգային մասնավոր իրավունքը դառնում է դրա կարևոր կարգավորիչներից մեկը: Այլ կերպ կարող ենք նշել, որ այսօր մարդկությունը գտնվում է գլոբալիզացիայի որոշակի գործընթացների ներքո: Քանի որ դրանց ելքի կամ վերջնարդյունքի վերաբերյալ փիլիսոփայական բանավեճի մեջ մտնելը դուրս է այս հոդվածի նպատակների և խնդիրների շրջանակից, ներկա իրողությունների առնչությամբ նկատենք միայն, որ, չնայած գլոբալիզացման ուղղությամբ գործընթացների էական առաջընթացին, դրա ուտոպիստական գաղափարները դեռևս շատ հեռու են իրականություն դառնալուց: Ընդ որում, դրա վառ ապացույցը կարող է դիտարկվել նաև, այսպես կոչված, ռուս-ուկրաինական պատերազմը, որը ընդամենը մեկ տարում ի չիք դարձրեց գլոբալիզացիային ուղղված շուրջ կես դարում տեղի ունեցած գործընթացները:

Ուստի սխալված չենք լինի, եթե նշենք, որ քանի դեռ գոյություն ունեն սուվերեն իշխանությամբ օժտված պետություններ՝ իրենց սահմաններով հանդերձ, գլոբալիզացիայի ուտոպիստական գաղափարները դեռ հեռու են թվալու: Ընդ որում, խոսքը ոչ միայն պետության աշխարհագրական, ֆիզիկական սահմանների մասին է, այլ նաև դրա իրավական սահմանների: Այլ կերպ՝ պետությունները, իրենց իրավագործության ներքո գտնվող անհատներին և կազմակերպություններին թույլատրելով մտնել միջազգային մասնավոր հարաբերությունների մեջ, միևնույն ժամանակ քայլեր են ձեռնարկում պաշտպանելու իրենց ազգային իրավունքը, ներառյալ՝ դրա հիմքում ընկած հասարակական այլ երևույթներ, ինչպիսիք են տնտեսական կարգը, կրոնական և բարոյական պատկերացումները և այլն:

Հենց այս նպատակով մի շարք պետություններ, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետությունը, իրենց իրավական կարգավորումների զինանոցում նախատեսում են այնպիսի կառուցակարգ, ինչպիսին հանրային կարգի մասին վերապահումն է: Այն հնարավորություն է ընձեռում չկիրառել կոլիզիոն նորմերի հիման վրա ընտրված օտարերկրյա իրավունքը, իսկ վերջինիս հիման վրա ծագած սուբյեկտիվ իրավունքները չպաշտպանել, եթե դա հակասում է տվյալ պետության հանրային կարգին¹: Հանրային կարգը, իր հերթին, ընդհանրական վերցրած, նշանակում է այն հիմնարար իրավական սկզբունքների, արդարության և բարոյականության մասին հիմնարար ընկալումների և հիմնական իրավանորմերի ամբողջությունը, որոնք, հասարակության և պետության համար իրենց բացառիկ նշանակությամբ պայմանավորված, համընդհանուր բնույթ ունեն²:

Այսպես, հանրային կարգը կարող ենք բնորոշել որպես պաշպանական կառուցակարգ, որը միտված է ապահովելու տվյալ պետության իրավակարգի կայունությունն ու անբակտելիությունը, և այս կառուցակարգի նշանակությունը սկսվում ու ավարտվում է այդ նպատակի շրջանակներում: Ընդ որում, հանրային կարգի այս նշանակության մասին է վկայում նաև դրա պատմական զարգացումը: Մասնավորապես, իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի, այնուհետև առևտրային հարաբերությունների զարգացմամբ պայմանավորված օտարերկրյա առևտրականների հետ կապված հարաբերությունները կարգավորելու պահանջը առաջ բերեցին դրանց արդյունքում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման և

¹ Ст'у Дмитриева Галина Кирилловна, Международное частное право: учебник / отв. ред. Г.К. Дмитриева. - 4-е изд., перераб. и доп., ISBN 978-5-392-19535-0 - Москва: Проспект, 2016. - 680 с., էջ 162:

² Ст'у Лебедев Сергей Николаевич, Кабатова Елена Витальевна, Международное частное право: Учебник. В 2 т. Т. 1: Общая часть / Отв. ред. С.Н. Лебедев, Е.В. Кабатова, ISBN 978-5-8354-0767-5 (т. 1) (в пер.) ISBN 978-5-8354-0766-8. - М.: Статут, 2011. - 400 с., էջ 314:

նման առևտրի ողջամիտ կազմակերպման անհրաժեշտությունը¹: Իսկ քանի որ իրավունքի ներպետական նորմերը նախատեսված էին ներպետական իրավահարաբերությունների կարգավորման համար և հաշվի չէին առնում օտարերկրյա տարրով ծանրաբեռնված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները, առաջանում է անհրաժեշտություն այդ հարաբերությունները կարգավորել ոչ թե ազգային, այլ օտարերկրյա իրավունքի միջոցով²: Քանի որ օտարերկրյա իրավունքի նման կիրառումն էլ կարող է հակասել կիրառող երկրի իրավակարգին, օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջանում նախատեսել կառուցակարգ, որը հնարավորություն կտա մերժել օտարերկրյա իրավունքի նորմի կիրառումը՝ միաժամանակ չհակասելով և չխախտելով այն տրամաբանությունը, որի հիման վրա ի սկզբանե ընդունելի է համարվել օտարերկրյա իրավունքի նորմի կիրառման թույլատրելիությունը:

2. Ազգային և միջազգային հանրային կարգերը և դրանց առանձնահատկությունները

Որպես հանրային կարգի առանձնահատկություն առանձնացվում է դրա տարածքային հատկանիշը, այն է՝ յուրաքանչյուր սոցիումում, այս դեպքում՝ յուրաքանչյուր պետության շրջանակներում ձևավորվում է սեփական հանրային կարգը³: Ընդ որում, նշվածը պայմանավորված է հենց այն ինստիտուտների առանձնահատկություններով, որոնց պաշտպանությանը միտված է հանրային կարգի մասին վերապահումը. օրինակ՝ իրավունքը, բարոյականությունը, քաղաքական և տնտեսական կարգերը, որոնք նույնպես ունեն իրենց ազգային առանձնահատկությունները՝ պայմանավորելով հանրային կարգի այս հատկանիշը⁴:

Ընդունված է համարել, որ հանրային կարգի տարանջատումը ազգային և միջազգային առաջին անգամ տվել է շվեյցարացի իրավաբան Կառլ Բոռչեն (ordre public interne / ordre public international), ով, չնայած տեսական այդ տարանջատմանը, նշում էր, որ պետության տարածքում գործում է միայն մեկ հանրային կարգ, այլ կերպ՝ չնայած միջազգային հանրային կարգի միջազգային բնույթին՝ դրա արմատները ազգային են⁵: Ինչպես պատկերավոր նշել է Բրունը՝ համեմատելով Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 6-րդ և 3-րդ հոդվածները⁶, «սահմանները, որոնք օրենսդիրը սահմանում է՝ ի հակադրումն անձնական ազատության՝ պարտավորեցնելով իրավունքի սուբյեկտներին ենթարկվել օրենսդրի անվիճելի

¹ **Богатина Юлия Геннадьевна**, Оговорка о публичном порядке в международном частном праве: теоретические проблемы и современная практика, ISBN 978-5-8354-0633-3. - Москва, Статут, 2010, 407с., էջ 8 (КонсультантПлюс հարթակի գեներացրած փաստաթղթի համարակալմամբ):

² Տե՛ս **Левитин А.Б.**, Вопросы публичного порядка в международном частном праве // Проблемы международного частного права / Под ред. Л.А. Лунца. Москва, 1960, էջ 208:

³ Տե՛ս **Морозова Юлия Геннадьевна**, Оговорка о публичном порядке в международном частном праве: понятие и современный порядок применения. Диссертация - Москва, Российская академия государственной службы при президенте Российской Федерации, 2001, էջ 18:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

⁶ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 6-րդ հոդվածում նշվում է, որ «Մասնավոր համաձայնություններով չի թուլատրվում շեղվել այն կարգավորումներից, որոնք վերաբերում են հանրային կարգին և բարոյականությանը», իսկ 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Հանրային կարգին և անվտանգությանը վերաբերող կարգավորումները պարտավորեցնող են բոլոր նրանց համար, ովքեր գտնվում են *Ֆրանսիայի (լրացումը մերն է)* տարածքում»:

կամքին, որևէ առնչություն չունեն այն սահմանների հետ, որոնք անցկացվում են սուվերենիտետների միջև»¹:

Այս տրամաբանության ներքո ընդունված է համարել, որ ազգային հանրային կարգը կիրառելի է միայն լիովին ներպետական հարաբերությունների նկատմամբ², երբ պետությունը սահմանափակում է իր իրավագործության ներքո գտնվող իրավա-հարաբերությունների սուբյեկտների ազատության, ինքնավարության սահմանները՝ պաշտպանելով իր իրավասության ներքո գտնվող հասարակության շահերը. այլ կերպ՝ հակակշռի դեր կատարելով մասնավորի և հանրայինի միջև: Ուստի, երբ դատարանը պետք է ներպետական հարաբերության կապակցությամբ կիրառի իր ազգային հանրային կարգը, նա հաշվի է առնում միայն իր ազգային իրավական համակարգի արժեքները, որոնք թեև երկրից երկիր տարբեր են, սակայն շատ դեպքերում ունեն շատ ընդհանրություններ³:

Փոխարենը, արժեքները, որոնց պաշտպանությանը միտված է միջազգային հանրային կարգը, ավելի էական են, քան նրանք, որոնց պաշտպանության համար գործում է ազգային հանրային կարգը⁴: Կարելի է եզրակացնել, որ դրանք այն արժեքներն են, որոնք դատարանը պետք է գնահատի միջազգային պրիզմայում, երբ օտարերկրյա նորմը փորձում է ներխուժել իր իրավակարգ՝ հաշվի առնելով վերը նշված տարբեր երկրների արժեհամակարգերի ընդհանրությունները, ինչպես նաև հավանական հակասությունների դեպքում դրանց թուլատրման հետևանքները: Հետևաբար, դատարանն այս դեպքում պետք է իրավացիորեն կաշկանդվի և դիտարկի նաև ներխուժող իրավունքի երկրի արժեքները, հիմք ընդունի իր երկրի հիմնական արժեքները, որոնց խախտման հետևանքը անընդունելի կլինի իր երկրի իրավակարգի համար, ինչպես նաև հետևողական լինի *comitas gentium*-ի պահպանմանը: Վերջինս, լինելով ոչ այնքան իրավական, որքան քաղաքական տարր, էական նշանակություն ունի միջազգային հարաբերությունների, միջազգային առևտրի և պետությունների միջև փոխանակման զարգացմանը նպաստելու տեսանկյունից⁵:

Հանրային կարգի ազգային և միջազգային տեսակների միջև տարանջատումն առավել հստակ սահմանելու նպատակով՝ անդրադառնանք միջազգային դատական պրակտիկային ևս: Այսպես, ավստրալիական դաշնային դատարանը, անդրադառնալով Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետին, հիմնվելով նաև Վան դեն Բերգի տեսական մեկնաբանությունների վրա, նշել է, որ այն ոչ թե իրավագործում է կոնկրետ պետության ազգային հանրային կարգը, այլ նախանշում է մի կառուցակարգ, որն ամրագրում է կոնվենցիայի միջազգային դերը, ինչպես նաև հանրային կարգի վերապահումը միայն տվյալ պետությունում առկա բարոյականության և արդարության մասին ամենահիմնարար սկզբունքներին հակասության դեպքերով սահմանափակելը՝ ապահովելու համար այս հարցում միջազգ-

¹ Տե՛ս **Брун Михаил Исаакиевич**, Публичный порядок в международном частном праве, Петроград, 1916, էջ 18:

² Տե՛ս **Chong, Adeline Swee Ling**, Transnational Public Policy in Civil and Commercial Matters. (2012). Law Quarterly Review. 128, 88-113, p. 2:

³ Տե՛ս **Margaret L. Moses**, 'Chapter 11: Public Policy under the New York Convention: National, International and Transnational', in Katia Fach Gomez and Ana M. Lopez-Rodriguez (eds), 60 Years of the New York Convention: Key Issues and Future Challenges, (Kluwer Law International; Kluwer Law International 2019) pp. 169-184, էջեր 172-3:

⁴ Տե՛ս **Chong, Adeline Swee Ling**, նշվ. աշխ., էջ 2:

⁵ Տե՛ս **Արմեն Հայկյանց**, Միջազգային մասնավոր իրավունք: Դասագիրք: 2-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով) / Ա. Հայկյանց.-Եր.: Երևանի պետ. համալս., ISBN 978-5-8084-1792-2 - Եր.: ԵՊՀ հրատ., 2013: 552 էջ, էջեր 23-24:

գային մոտեցումը¹: Նմանապես, Լյուքսեմբուրգի դատարանը, անդրադառնալով նույն կարգավորմանը, նշել է, որ այն վերաբերում է պետության ոչ թե ազգային, այլ միջազգային հանրային կարգին, այսինքն՝ այն ամենին, ինչը համարվում է էական բարոյական, քաղաքական կամ տնտեսական կարգի համար և ինքնին բացառում այդ պետության հանրային կարգի հետ անհամատեղելի վճռի կատարումը²: Կամ, օրինակ, իտալական դատարանը, անդրադառնալով միջազգային հանրային կարգի խախտմանը, նշել է, որ այն ենթադրում է դատարանի վայրի իրավական համակարգի հիմնարար սկզբունքներն ու արժեքները (սկսած սահմանադրականից), ներառյալ նրանք, որոնք բնութագրում են նրա սոցիալ-էթիկական կառուցվածքը տվյալ պատմական պահին³: Գերմանական դատարանը, արբիտրաժային վճռի ճանաչման վարույթի շրջանակներում անդրադառնալով իր առջև բարձրացված հանրային կարգի խախտման պահանջին, նշել է, որ գերմանական սնանկության մասին օրենսդրությամբ սահմանված ոչ վերջնական կամ անբավարար-վերջնական պահանջը անվճարունակության ռեգիստրում գրանցելու ամենաառաջին կանոնների խախտումը չի կարող համարվել այնպիսի լուրջ խախտում, որը կհանգեցնեք միջազգային հանրային կարգի խախտման, որն ավելի նեղ նշանակություն ունի, քան ազգային հանրային կարգը և կարող է արդարացնել ճանաչման կամ կատարման մերժումը, երբ տվյալ խախտումը խաթարում է Գերմանիայի հասարակական կամ տնտեսական կյանքի հիմնարար սկզբունքները⁴: Մեկ այլ գործով ևս, երբ բողոքաբերը գերմանական օրենսդրության հակասական կիրառման հիմքով պնդել է հանրային կարգի խախտումը, գերմանական դատարանը մերժել է հանրային կարգին հակասության հիմքով արբիտրաժային վճռի ճանաչումը մերժելու պահանջը և նշել, որ գերմանական իմպերատիվ նորմերին հակասող ոչ բոլոր արբիտրաժային վճիռներն են հակասում Գերմանիայի միջազգային հանրային կարգին, քանի դեռ դրանք չեն խախտում ամենահիմնարար նորմերը, որոնք արտացոլում են օրենսդրի սահմանած էական արժեհամակարգն այնպես, որ ոչ մի կողմ չի կարող շեղվել դրանցից⁵:

Ինչպես նկատում ենք, մոտեցումը, որ միջազգային հանրային կարգի վերապահումը պետք է սահմանափակվի միայն, այսպես կոչված, հիմնարար արժեքներ-

¹ St' u **Damian Sturzaker**, 'TCL Air Conditioner (Zhongshan) Co Ltd v. Castel Electronics Pty Ltd [2014] FCAFC 83, Federal Court of Australia, New South Wales District Registry, VID 1042 of 2012, VID 1043 of 2012, VID 1044 of 2012, 16 July 2014', A contribution by the ITA Board of Reporters; Kluwer Law International, p. 20:

² 'Luxembourg No. 1, Kersa Holding Company Luxembourg v. Infancourtage, Famajuk Investment and Isny, Cour Superieure de Justice [Court of Appeal], Not Indicated, 24 November 1993', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 1996 - Volume XXI, Yearbook Commercial Arbitration, Volume 21 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 1996), pp. 617 - 626, p. 625:

³ 'Italy No. 181, C.G. Impianti SpA (Italy) v. B.M.A.A.B. and Sons International Contracting Company WLL (Kuwait), Corte di Appello [Court of Appeal], Milan, Not Indicated, 29 April 2009', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2010 - Volume XXXV, Yearbook Commercial Arbitration, Volume 35 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2010), pp. 415 - 417, p. 417:

⁴ 'Germany No. 146, H v. F in liquidation, Higher Regional Court of Karlsruhe, Case No. 9 Sch 2/09, 4 January 2012 and Federal Court of Justice of Germany, Case No. III ZB 8/12, 20 December 2012', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2013 - Volume XXXVIII, Yearbook Commercial Arbitration, Volume 38 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2013), pp. 379 - 383, p. 381:

⁵ St' u **Richard Kreindler**, 'BGH – III ZB 17/08, Federal Court of Justice of Germany, III ZB 17/08, 30 October 2008', A contribution by the ITA Board of Reporters; Kluwer Law International, St' u <https://www.kluwerarbitration.com/document/ipn91359?q=international+public+policy> հղումով 25.11.2023թ. դրությամբ:

րի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այն հստակ բնորոշիչներից է, որն ընդհանուր է քննարկված տեսական և դատական աղբյուրներում: Միաժամանակ, հստակ ընդգծվում է միջազգային հանրային կարգի մեկ այլ բնորոշիչ ևս, այն է՝ միջազգային հանրային կարգը ոչ թե ինքնուրույն գոյություն ունեցող երևույթ է, այլ տվյալ պետության ազգային հանրային կարգի մի մասն է: Հետևաբար, միջազգային հանրային կարգին անդրադառնալիս դատարանները պետք է այն սահմանեն պետական մակարդակով, և այն պետք է շարունակվի համարվել որպես տվյալ պետության հանրային կարգ¹:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ազգային հանրային կարգը այն կառուցակարգն է, որը միտված է պաշտպանելու իրավակարգը այն դեպքում, երբ խնդրո առարկա հարաբերությունները ունեն ազգային բնույթ, այն է՝ իրավահարաբերության թե՛ օբյեկտը, թե՛ սուբյեկտը և թե՛ բովանդակությունը ենթարկվում են տվյալ երկրի իրավասությանը: Որպես հանրային կարգի ազգային տեսակի օրինակ կարելի է նշել այն դեպքերը, երբ որոշակի տարիքի հասած չլինելու հիմքով անձին արգելվում է որոշակի գործարքներ կնքել: Ընդ որում, հանրային կարգի ազգային տեսակի ներքո կարելի է հասկանալ ոչ միայն իրավունքի հիմքում ընկած երևույթները (բարոյականություն, տնտեսական և քաղաքական կարգեր և այլն), այլև հենց տվյալ պետությունում պոզիտիվացված իմպերատիվ իրավանորմերը, քանի որ նշված երևույթները ազգային հարաբերությունների նկատմամբ պրոտեկցիայում սովորաբար ստանում են պոզիտիվ արտահայտություն: Օրինակ՝ կարող ենք նշել Քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասը, որն արգելում է կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին) հակասող պայմանագիր կնքելը: Հետևապես, ազգային հանրային կարգը ընկած է իրավահարաբերությունների ազգային կարգավորման հիմքում, և ցանկացած դեպքում այն հաշվի է առնվում իրավակիրառողի կողմից:

Ի տարբերություն նշվածի՝ այն դեպքերում, երբ հարաբերությունը ծանրաբեռնվում է օտարերկրյա տարրով, ինչով պայմանավորված՝ օտարերկրյա իրավունքի նորմն է փորձում ներխուժել տվյալ երկրի իրավակարգ, և անհրաժեշտ է լինում որպես պաշտպանություն դիմել հանրային կարգի վերապահմանը, ապա այս դեպքում գործ ունենք, այսպես կոչված, միջազգային հանրային կարգի հետ: Ընդ որում, միայն իրավահարաբերության օտարերկրյա տարրով ծանրաբեռնված լինելը ինքնին բավարար չէ միջազգային հանրային կարգի կիրառման համար, այլ այն պետք է նաև հանգեցնի օտարերկրյա իրավունքի նորմի ներխուժման: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ միջազգային հանրային կարգը ընդամենը մի մասն է տվյալ պետության ազգային կարգի, այլ ոչ թե գտնվում է տվյալ պետության իրավակարգից դուրս: Ամբողջի և մասի հարաբերակցության տեսանկյունից ազգային հանրային կարգը ամբողջն է, իսկ միջազգայինը՝ մասը: Հետևաբար, միջազգային հանրային կարգի մեկնաբանման և կիրառման սահմանները նաև ավելի նեղ են, քան ազգային հանրային կարգինը: Ուստի յուրաքանչյուր անգամ միջազգային հանրային կարգին անդրադառնալիս դատարանները պետք է մտաբերեն այդ հարաբերության միջազգային բնույթը և դրանով պայմանավորված հանրային կարգի կիրառման ողջամտության սահմանները: Որպես միջազգային հանրային կարգի ակնառու օրինակ կարող ենք մեջբերել Քաղաքացիական օրենսգրքի 1258-րդ հոդվածը, որի 1-ին մասով սահմանվում է վերապահման կիրառման հնարավորությունը՝ թույլատրելով արգելել օտարերկրյա իրավունքի նորմի կիրառումը, երբ դա հակասում է Հայաստանի հանրային կարգին: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը, ըստ էության, նախանշում է կամ նախազգուշացնում է դրա ողջամտության սահմանների մասին՝ հանդես գալով որպես օրենսդրի հորդոր իրավակիրառողների, այս դեպ-

¹ Տե՛ս Margaret L. Moses, նշվ. աշխ., էջ 173:

քում՝ դատարանների համար՝ նշելով, որ օտարերկրյա իրավունքի նորմի կիրառումից հրաժարվելը չի կարող հիմնվել միայն համապատասխան օտարերկրյա պետության իրավական, քաղաքական կամ տնտեսական համակարգը Հայաստանի Հանրապետության իրավական, քաղաքական կամ տնտեսական համակարգից տարբերվելու հանգամանքի վրա:

Ցանկանում ենք ընդգծել նաև, որ թեև միջազգային հանրային կարգը դիտարկվում է ազգային հանրային կարգի տարր, նշվածը չի ենթադրում, որ դրա պաշտպանության առնչությամբ չի կարելի անդրադառնալ միջազգայնորեն ամրագրված արժեքների և: Սակայն այստեղ նույնպես պետք է նկատի ունենալ, որ այդ արժեքները պետք է դիտարկվեն որպես ազգային, այլ կերպ՝ որևէ եղանակով իմպլեմենտացված լինեն Հայաստանի իրավակարգում: Ամենից հաճախ նման իրավիճակի կարող ենք հանդիպել միջազգային պայմանագրերի դեպքում, որոնք վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից, ինչպիսի հանգամանքով պայմանավորված՝ ոչ միայն դրանցով նախատեսված պոզիտիվ իրավակարգավորումներն են դառնում Հայաստանի իրավունքի մասը, այլ նաև դրանց հիմքում ընկած սկզբունքներն ու արժեքները: Որպես օրինակ՝ դիտարկենք Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան¹, որի 7-րդ հոդվածով ամրագրվել է բարեխղճության սկզբունքը, որը քաղաքացիական օրենսգրքում ուղղակիորեն ամրագրված չէ: Ուստի միջազգային հանրային կարգի վերապահմանը դիմելիս Հայաստանի Հանրապետության դատարանը կարող է այն կիրառել՝ նաև հիմնվելով բարեխղճության սկզբունքին հակասության վրա:

3. Անդրազգային հանրային կարգի հայեցակարգը և դրա կենսականությունը իրավունքի զարգացման արդի պայմաններում

Հանրային կարգի՝ վերը քննարկված տեսակներից բացի՝ իրավունքի տեսության շրջանակում առաջ է քաշվել նաև դրա մեկ այլ տեսակի վերաբերյալ տեսություն, այն է՝ այսպես կոչված, անդրազգային հանրային կարգը կամ իրական միջազգային հանրային կարգը: Հանրային կարգի այս տեսակը դիտարկվում է ոչ թե որպես որևէ կոնկրետ երկրի հանրային կարգ, այլ՝ այնպիսի հանրային կարգ, որը անցնում է պետականի սահմանները²: Այլ կերպ՝ անդրազգային հանրային կարգի ներքո դիտարկվում են այնպիսի հիմնարար արժեքներ, որոնք ընդհանուր են բոլոր ազգերի կամ «քաղաքակիրթ ազգերի» համար³: Այն բնութագրվում է որպես մի կառուցակարգ, որը կազմված է այնպիսի իմպերատիվ կարգավորիչներից, որոնք կարող են կիրառվել միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտների վրա հենց այդ սուբյեկտների կողմից կամ քաղաքակիրթ հանրության կողմից ստեղծված լինելու ուժով, կամ՝ քանի որ դրանք ընդունելի են աշխարհի տարբեր հասարակությունների կողմից⁴:

Պատմականորեն դիտարկելիս կարելի է նկատել, որ նման անդրազգային իրավակարգի գոյության կապակցությամբ առաջին մոտեցումները փորձել են ամրագրել գերմանական իրավակարգում, երբ որոշ գերմանացի իրավաբաններ մտա-

¹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64752> հղումով 28.11.2023թ. դրությամբ

² Տե՛ս Margaret L. Moses, նշվ. աշխ., էջ 179:

³ Տե՛ս նույն տեղում, Stavros Brekoulakis, Part I Cornerstones, Ch. 5 Transnational Public Policy in International Arbitration. From the Oxford Handbook of International Arbitration, Edited by Thomas Schultz, Federico Ortino. ISBN: 9780198796190, 2020, էջ 123:

⁴ Տե՛ս Catherine Kessedjian, Transnational Public Policy, in AJ Van Den Berg (ed), International Arbitration 2006: Back to Basics?: ICCA International Arbitration Congress - International Council for Commercial Arbitration Congress Series No. 13 (Kluwer Law International, Alphen Aan Den Rijn 2007), p. 861:

ծում էին հրաժարվել ավանդական, ձևական կառուցակարգերից՝ նախապատվությունը տալով իրավական նախադեպին, ինչը, սակայն, նրանց չի հաջողվում իրականացնել ընդհանուր վերցրած իրավունքի ոլորտում, և իրավունքի միակ ճյուղը, որտեղ հնարավորություն կար շարունակելու պնդել այդ գաղափարները, մնում է առևտրային իրավունքը¹: Մասնավորապես, Լեին Գոլդշմիդը գտնում էր, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր իրավակարգերում առևտրային հարաբերությունները կարգավորող նորմերի ընդհանրության պատճառը հենց առևտրի՝ որպես երևույթի միջազգային և «կոսմոպոլիտ» բնույթն է²: Այս համատեքստում, պնդելով առևտրային հարաբերությունների առանձնահատուկ բնույթը հաշվի առնելու անհրաժեշտությունը, Գոլդշմիդը գտնում էր, որ դատարաններում պետք է ներգրավվեն հենց առևտրականները. ընդ որում այս մոտեցումը դեռևս կասկածի տակ չէր դնում պետության սուվերենությունը³:

Անդրազգային հայեցակարգի գաղափարի զարգացման հաջորդ և առավել էական փուլը, կարելի է համարել, սկսվում է Երկրորդ աշխարհամարտից հետո՝ հատկապես հաշվի առնելով հետպատերազմյան իրողությունները: Այս ժամանակաշրջանում գլոբալիզացմանը միտված նման գաղափարների առաջնորդը ըստ էության պատահական չէ և առավելապես թելադրված է հենց այդ պատմական շրջափուլի առանձնահատկություններով: Մասնավորապես, Երկրորդ աշխարհամարտի պես կործանիչ պատերազմից հետո աշխարհի ժողովուրդները ունեին օրակարգային մեկ հարց՝ հաստատել կայուն և երկարատև խաղաղություն, որի փիլիսոփայական հիմքերում որոշ հարցերում դրանց գաղափարական և արժեքային միավորումն էր: Հենց այդ տրամաբանությամբ էլ ձևավորվեցին մի շարք միջազգային միավորումներ, ինչպիսիք էին Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական միությունը և այլն: Այնուհետև դրանց հենքի վրա կազմվեցին միավորված իրավական գործիքներ՝ կոնվենցիաներ, հռչակագրեր և այլն, ներառյալ՝ Նյու Յորքի կոնվենցիան: Ուստի պատահական չէ, որ հենց այս ժամանակահատվածում պետք է նաև աշխուժանային այնպիսի գլոբալ գաղափարի մասին տեսական բանավեճերը, ինչպիսիքն անդրազգային հանրային կարգն է:

Մասնավորապես առաջ էին քաշվում այնպիսի գաղափարներ, ըստ որոնց հանրային կարգի գնահատման համատեքստում պետք է հաշվի առնվեն նաև այնպիսի իրավական փաստաթղթեր, որոնք ո՛չ ազգային են, ո՛չ միջազգային, այլ մշակված են մասնագիտական հանրույթի կողմից, ինչպես օրինակ՝ Առևտրի միջազգային պալատը, Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիան և այլն⁴, կամ որ նման հանրային կարգը կարող է ձևավորվել և գործել նաև ինքնուրույն, ինքնաբերաբար⁵: Չարմանալի չէ նաև, որ տեսական նման մոտեցումների զարգացումը որոշակի ազդեցություն և հետևանքներ պետք է ունենար իրավակիրառ գործունեության շրջանակներում ևս: Այսպես, Պիեռ Լալիվը արդեն գտնում էր, որ միջազգային արբիտրաժը գործում է միջազգային արդարադատության համատեքստում, և որ արբիտրները սահմանափակված չեն կոլիզիոն կապերի հիման վրա ընտրված իրավունքով՝ իրավասու լինելով ուղղակիորեն կիրառել իրավունքի ընդ-

¹ Տե՛ս **Jan Kleinheisterkamp**, *The Myth of Transnational Public Policy in International Arbitration*, *The American Journal of Comparative Law*, Vol. 71, 2023, <https://doi.org/10.1093/ajcl/avad2021>, pp. 98-141, p. 104:

² Տե՛ս նույն տեղում, էջ 105:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 113:

⁵ Տե՛ս **Teubner, Gunther**, *Global Bukowina: Legal Pluralism in the World-Society* (1996). *GLOBAL LAW WITHOUT A STATE*, Gunther Teubner, ed., Dartmouth, pp. 3-28, 1996, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=896478>, p. 13:

հանուր սկզբունքները¹: Ավելի հեռուն էին գնում էնմանուել Գայարդի տեսակետները, ով ընդհուպ պնդում էր, որ արբիտրները անգամ իրավասու են չդիտարկել կողմերի ընտրած իրավունքը, երբ գտնում են, որ այն խախտում է միջազգային հանրության հիմնարար արժեքները, որոնք պաշտպանված են իրական միջազգային հանրային կարգով և պատահապատում են պետությունների մեծամասնության, եթե ոչ միաձայն, կոնսենսուսը²:

Անդրադառնալով դատական (արբիտրաժային) գործերի քննությանը՝ որոշ դեպքերում նկատում ենք նմանաշունչ մոտեցումների փաստացի ամրագրում: Օրինակ, Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանը իր քննությանը ենթակա գործերից մեկով արձանագրել է, որ միջազգային արբիտրաժային վճիռը, որը խարսխված չէ որևէ ազգային իրավական կարգում, միջազգային արդարադատության արդյունք է, որի վավերությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով այն երկրի կանոնները, որտեղ պահանջվում են դրա ճանաչումը և կիրարկումը³: Մեկ այլ դեպքում արբիտրաժային տրիբունալը, եզրակացնելով, որ հայցով պահանջվող գումարը ուղղվելու է Արգենտինայի կառավարության պաշտոնյաներին կաշառելու համար, գտել է, որ դրա հիմքում ընկած գործարքը հակասում է լավ բարքերին (*bonos mores*), և դրանով պայմանավորված՝ գործարքն անվավեր է ճանաչել⁴: Այլ գործով էլ արբիտրաժային տրիբունալը գտել է, որ հակադարձ վճարումների նախատեսումը հակասում է բարոյականության հիմնարար սկզբունքներին (հղվելով անդրազգային հանրային կարգին), և անվավեր է ճանաչել կողմերի միջև կնքված գործարքը, թեև նման վճարումներ կատարելը ո՛չ կիրառելի օրենքով էր արգելված, ո՛չ էլ վերաբերելի երկրների հանրային կարգի ներքո⁵:

Ըստ այդմ կարելի է առանձնացնել անդրազգային հանրային կարգի երկու առանձնահատկություն՝ նախ կոնսենսուսը, այն է՝ նման հանրային կարգը ներառում է այնպիսի արժեքներ, որոնք արտահայտում են համընդհանուր կամ առնվազն տարածաշրջանային համաձայնություն ազգերի միջև, և երկրորդ՝ էականությունը, այն է՝ նշված համընդհանուր արժեքները պետք է ունենան հիմնարար նշանակություն⁶: Անդրազգային հանրային կարգի հայեցակարգի զարգացման կապակցությամբ, ընդհանուր առմամբ, կարող ենք նկատել, որ այն հաճախ մեկնաբանվում է որպես գործիք, որը միտված է ապահովելու արբիտրաժի զարգացումը, արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման միասնական մոտեցումները և այլն⁷: Սակայն նման մոտեցումները, ըստ մեզ, ունեն մեկ մեծ թերություն, այն է՝ դրանք

¹ St' u **Pierre Lalive**, Transnational (or Truly International) Public Policy and International Arbitration, in Pieter Sanders (ed), Comparative Arbitration Practice and Public Policy in Arbitration, ICCA Congress Series, 1986 New York Volume 3 (Kluwer Law International; Kluwer Law International 1987) pp. 258-318, p. 270:

² St' u **Jan Kleinheisterkamp**, նշվ. աշխ., էջ 122:

³ 'France No. 42, PT Putrabali Adyamulia (Indonesia) v. Rena Holding, et al., Cour de Cassation [Supreme Court], First Civil Chamber, Not Indicated, 29 June 2007', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2007 - Volume XXXII, Yearbook Commercial Arbitration, Volume 32 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2007), pp. 299 - 302, էջ 302:

⁴ ICC Award No. 1110 of 1963 by Gunnar Lagergren, YCA 1996, at 47 et seq. (also published in: Arb.Int'l 1994, at 282 et seq.). St' u https://icsid.worldbank.org/sites/default/files/parties_publications/C3765/Respondent%27s%20Counter-Memorial/Pi%C3%A8ces%20juridiques/RL-0061.pdf հղումով 28.11.2023թ. դրությամբ:

⁵ *ICC Case N° 15300*, Final Award in Case 15300 (Extract), 29 November 2023. St' u <https://jusmundi-com.peacepalace.idm.oclc.org/en/document/decision/en-icc-case-ndeg-15300-final-award-in-case-15300-extract> հղումով 28.11.2023թ. դրությամբ:

⁶ St' u **Hossein Fazilatfar**, Transnational Public Policy: Does it Function from Arbitrability to Enforcement?, City University of Hong Kong Law Review, Vol. 3:2, 2012, pp. 289-313, էջ 294:

⁷ St' u օրինակ՝ **Pierre Lalive**, նշվ. աշխ., նույն տեղում, **Hossein Fazilatfar**, նշվ. աշխ., էջ 312:

հաշվի չեն առնում հանրային կարգի մասին վերապահման կառուցակարգի՝ սույն աշխատության շրջանակներում արդեն քննարկված նշանակությունը՝ պաշտպանել տվյալ պետության իրավակարգը այդ պետության հասարակության համար «անցանկալի» օտարերկրյա իրավունքի ներխուժումից, այլ ոչ թե հարթակ դառնալ վեճերի լուծման որևէ եղանակի զարգացումն ապահովելու համար:

Ավելին, այսպես կոչված «անդրազգայնամետ» տեսակետների լույսի ներքո կարող ենք նկատել, որ անդրազգային հանրային կարգը, կարելի է ասել, ձգտում է վիճարկել պետության սուվերենությունը՝ փորձելով սահմանադրականացնել պետությունների իրավունքի սահմաններից դուրս գտնվող ուտոպիստական իրավասությունը և փոխարինել դրանց իրավունքը¹: Այս շղարշի ներքո որոշ աղբյուրներում ընդհուպ նշվում է, որ ազգային և անդրազգային հանրային կարգերի միջև հակասության դեպքում նախապատվությունը պետք է տրվի անդրազգայինին՝ որպես ավելի բարձր արժեքի²: Նման մոտեցումը, կարծում ենք, չափազանց ուտոպիստական է և փաստացի կտրված պետության ու իրավունքի վերաբերյալ իրերի ներկայիս դրությունից: Ըստ էության նման մոտեցումը նաև ենթադրում է միջազգային արբիտրների պարտավորությունների փոխանակում՝ առևտրային հարաբերության կողմերին իրենց միջև առկա վեճի լուծմանը նպաստելուց դեպի պոզիտիվ իրավունքի լրացում կամ փոխարինում³: Ինչքան էլ նման մոտեցումը առևտրականների կամ իրավաբան մասնագետների որոշ շրջանակի համար գրավիչ և ճկուն լինի, դրա պարագայում հաշվի չեն առնվում իրավունք նորմի՝ որպես սոցիալական հարաբերությունների կարգավորիչի մի քանի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են՝ դրա՝ պետության իրավասու մարմնի կողմից սահմանված կամ սանկցիավորված լինելը, դրանց օժտող-պարտադրող բնույթը, անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանքի միջոցով ապահովված լինելը⁴: Հետևապես, ժամանակակից իրավաբանական պայմաններում առանց պետության անհնարին են թվում իրավունքի գոյությունը, դրա առկայությունը ինքնիշխանության սահմաններից դուրս: Այս կապակցությամբ բավականին դիպուկ է նաև ԱՄՆ Գերագույն դատարանի դիրքորոշումը, որը իր՝ դեռևս 1938 թվականի որոշմամբ նշել է, որ իրավունքը գոյություն չունի առանց դրա ետևում կանգնած իշխանության, և այդ միակ իշխանությունը պետությունն է, որի իրավաստեղծ խոսքը պետք է լինի վերջնական⁵: Այլապես կստացվի մի իրավիճակ, երբ իրավունքի ստեղծումը պայմանավորված կլինի որոշ անհատների (մեծամասամբ արբիտրների) սուբյեկտիվ ընկալումներով ու արժեքային համակարգով⁶: Ուստի հանրային կարգին նման մոտեցումը, մեր կարծիքով, առավելապես վտանգ է պարունակում խախտել պետության իրավակարգը՝ հենց այն երևույթը, որի պաշտպանության համար պետք է գործեր հանրային կարգը:

Հատկանշական է, որ հենց Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը հնարավորություն է տալիս վերապահումը կիրառել, երբ որոշման ճանաչումը և կատարումը հակասում են այդ երկրի հասարակական կարգին: Ընդ որում, հենց նման մոտեցման ամրագրումն է եղել կոնվենցիան նախագծողների հստակ նպատակը՝ սահմանել «անվտանգության բարձիկ», որը կբացառի պետության սուվերենության խարխուլումը, եթե օտարերկրյա արբիտրաժային վճիռը անհամատեղե-

¹ Տե՛ս **Jan Kleinheisterkamp**, նշվ. աշխ., էջեր 127-8:

² Տե՛ս **Hossein Fazilatfar**, նշվ. աշխ., էջ 303:

³ Տե՛ս **Stavros Brekoulakis**, նշվ. աշխ., էջ 123:

⁴ Տե՛ս **Արթուր Վաղարշյան**, Պետության և իրավունքի տեսություն-2: Ղասախոսություն/Արթուր Վաղարշյան: ISBN 978-9939-53-965-2, ԵՊՀ - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011. 448 էջ, էջ 70:

⁵ *Erie Railroad Co. v. Tompkins*, 304 U.S. 64 (1938), տե՛ս <https://supreme.justia.com/cases/federal/us/304/64/> հղումով 27.11.2023թ. դրությամբ:

⁶ Տե՛ս **Stavros Brekoulakis**, նշվ. աշխ., էջ 125:

լի լինի այն ճանաչող և կատարող երկրի իրավակարգի հետ¹: Այս համատեքստում ևս դիտարկելով հանրային կարգի մասին վերապահման նշանակությունը՝ պետք է հաշվի առնել, որ հենց պետություններն են իրավագործել Նյու Յորքի կոնվենցիան՝ ըստ էության զիջելով իրենց սուվերենության մի մասը՝ իշխանությանը բնորոշ արդարադատություն իրականացնելու որոշ տարրերը, իրենց դատական իշխանության մասը չկազմող արբիտրաժային տրիբունալներին: Սակայն շարունակելով մնալ սուվերենության միակ կրողը, նրանք այդ զիջմանը դիմել են պայմանով միայն, որ կկարողանան միջամտել և խոչընդոտել արբիտրաժային տրիբունալների վճիռների կատարմանը, երբ դրանց կատարումը կհակադրվի իրենց սուվերենությանը: Այս մոտեցումը, ըստ էության, հավասարակշռման մոտեցում է մի շարք ուղղություններով²: Վերջիվերջո արբիտրների հիմնական պարտավորություններից մեկն է ընդունել այնպիսի վճիռ, որը հետագայում կատարման ենթակա (enforceable) կլինի պետական դատարանների կողմից³, իսկ երբ նրանք շեղվում են պետության կողմից ճանաչված իրավունքից, հենց իրենք էլ վտանգի տակ են դնում իրենց իրավագործությունը: Ընդ որում, այս մոտեցումը հավասարապես վերաբերելի է հանրային կարգի մասին վերապահման այլ դրսևորումներին՝ օտարերկրյա իրավունքի կիրառմանը կամ օտարերկրյա դատական ակտի ճանաչմանը: Նշվածի համատեքստում նկատենք նաև, որ Միջազգային իրավունքի ասոցիացիայի (International Law Association) Միջազգային առևտրային արբիտրաժի կոմիտեն (Committee on International Commercial Arbitration) նախատեսում էր իր կողմից մշակվող խորհրդատվական փաստաթղթում խրախուսել անդրազգային հանրային կարգի վերաբերյալ մոտեցումները, ինչը այդպես էլ տեղի չունեցավ մի քանի պատճառներով. օրինակ՝ հենց անդրազգային հանրային կարգի չափազանց անորոշ հասկացությունը և դրա բովանդակության կապակցությամբ բոլոր պետությունների միատեսակ մոտեցման անհստակությունը (*ըստ մեզ՝ անհնարինություն*)⁴:

Ամփոփելով նշենք, ըստ մեզ, անդրազգային հանրային կարգի պարադոքսը, որի ուժով հենց այդ տեսությունն է ինքն իրեն բացառում. եթե անդրազգային հանրային կարգը ներառում է արժեքներ, որոնք համընդհանուր են բոլոր կամ «քաղաքակիրթ» ազգերի համար, մի՞թե դա չի նշանակում, որ այդ արժեքները արդեն իսկ մասն են այդ ազգերի ազգային հանրային կարգի:

Եզրակացություն

Թեև հանրային կարգի և հանրային կարգի մասին վերապահման դասակարգումը ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, ցանկացած դեպքում պետք է նկատի ունենալ, որ այդ դասակարգումը պետք է բխի տվյալ իրավական կառուցակարգի էությունից, համապատասխանի դրա նշանակությանն ու առանձնահատկություններին: Հանրային կարգի պարագայում, մասնավորապես, դրա տեսակների դասակարգման հիմքերում պետք ընկած լինի այն գաղափարը, որ իրավունքի այս կառուցակարգը միջոց է պետությունների համար պաշտպանելու իրենց ազգային իրավակարգը օտարերկրյա իրավունքի նորմերի ներխուժման դեպքում,

¹ Տե՛ս **Margaret L. Moses**, նշվ. աշխ., էջ 170:

² Տե՛ս նույն տեղում, էջ 171:

³ Տե՛ս **Jeffrey Maurice Waincymer**, 'Part I: Policy and Principles, Chapter 2: Powers, Rights and Duties of Arbitrators', in Jeffrey Maurice Waincymer, Procedure and Evidence in International Arbitration, (© Kluwer Law International; Kluwer Law International 2012), pp. 47 - 126, էջ 97:

⁴ Տե՛ս **Pierre Mayer and Audley William Sheppard**, Recommendations of the International Law Association on Public Policy as a Ground for Refusing Recognition or Enforcement of International Arbitral Awards: Presentation, in Albert Jan Van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2004 - Volume XXIX, Yearbook Commercial Arbitration, Volume 29 (Kluwer Law International, ICCA & Kluwer Law International 2004) pp. 339-345, էջեր 339-40:

երբ դրանց իրավական ճանաչումը կարող է սպառնալ այդ իրավակարգի հիմնարար արժեքներին:

Այս տրամաբանության ներքո կարող ենք եզրահանգել, որ հանրային կարգը՝ որպես իրավական կառուցակարգ, օբյեկտիվորեն գոյություն ունի միայն իր ազգային դրսևորմամբ՝ որպես մի երևույթ, որն իր մեջ միավորում է տվյալ պետության հասարակության հիմնարար արժեքները: Միևնույն ժամանակ, թե՛ տեսական, թե՛ գործնական նկատառումներից ելնելով՝ ազգային հանրային կարգի շրջանակում և սահմաններում կարող է առանձնացվել միջազգային հանրային կարգը: Վերջինս, ի տարբերություն ազգային հանրային կարգի մասին վերապահման, որ կիրառվում է միմիայն տվյալ պետության իրավագործության ներքո գտնվող հարաբերությունների նկատմամբ, միտված է տվյալ պետության ազգային հանրային կարգի համատեքստում առավել էական և հիմնարար արժեքների պաշտպանությանը և կարող է կիրառվել միայն միջազգային տարր պարունակող հարաբերությունների նկատմամբ, այն էլ, երբ առկա է վտանգ այդ համատեքստում տվյալ պետության իրավակարգի տեսանկյունից անցանկալի օտարերկրյա իրավունքի նորմի ներխուժման:

Ի հակադրումն նշվածի՝ անդրազգային հանրային կարգը՝ որպես պետության իրավակարգից դուրս գոյություն ունեցող արժեքների համակարգ, գործնական որևէ նշանակություն չպետք է ունենա, քանի որ այն ոչ միայն հակադրվում է հանրային կարգի և հանրային կարգի մասին վերապահման նշանակությանը, այլև հավակնում է հակադրվել պետությունների սուվերենությանը և դառնալ իրավունքի չիրավագործված աղբյուր: Այն, թերևս, կարող է նշանակություն ունենալ միայն տեսական մակարդակում՝ գիտական հիմք հանդիսանալով իրական իրավաստեղծի՝ պետական իշխանության կրող մարմինների համար իրենց վերապահված իրավունքի զարգացման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Արթուր Վաղարշյան** - Պետության և իրավունքի տեսություն-2: Ղասախոսություն/Արթուր Վաղարշյան: ISBN 978-9939-53-965-2, ԵՊՀ - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011. 448 էջ

Artur Vagharshyan - Theory of State and Law-2. Lectures / Artur Vagharshyan. ISBN 978-9939-53-965-2, Yerevan State University - Yerevan, Author's Edition, 2011, 448 pages

2. **Արմեն Հայկյանց** - Միջազգային մասնավոր իրավունք: Ղասազիրք: 2-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով) / Ա. Հայկյանց.-Եր.: Երևանի պետ. համալս., ISBN 978-5-8084-1792-2 - Եր.: ԵՊՀ հրատ., 2013: 552 էջ

Armen Haykyants - Private International Law. Textbook. 2nd Edition (with additions and amendments) / A. Haykyants.-Yerevan. Yerevan State University, ISBN 978-5-8084-1792-2 - Yerevan. YSU Publishing, 2013. 552 pages

3. **Catherine Kessedjian** - Transnational Public Policy, in AJ Van Den Berg (ed), International Arbitration 2006: Back to Basics?: ICCA International Arbitration Congress - International Council for Commercial Arbitration Congress Series No. 13 (Kluwer Law International, Alphen Aan Den Rijn 2007)

4. **Chong, Adeline Swee Ling** - Transnational Public Policy in Civil and Commercial Matters. (2012). Law Quarterly Review. 128, 88-113

5. **Hossein Fazilatfar** - Transnational Public Policy: Does it Function from Arbitrability to Enforcement?, City University of Hong Kong Law Review, Vol. 3:2, 2012, pp. 289-313

6. **Jan Kleinheisterkamp** - The Myth of Transnational Public Policy in International Arbitration, The American Journal of Comparative Law, Vol. 71, 2023, <https://doi.org/10.1093/ajcl/avad2021>, pp. 98-141

7. **Jeffrey Maurice Waincymer** - 'Part I: Policy and Principles, Chapter 2: Powers, Rights and Duties of Arbitrators', in Jeffrey Maurice Waincymer, Procedure and Evidence in International Arbitration, (© Kluwer Law International; Kluwer Law International 2012), pp. 47 - 126

8. **Margaret L. Moses** - 'Chapter 11: Public Policy under the New York Convention: National, International and Transnational', in Katia Fach Gomez and Ana M. Lopez-Rodriguez (eds), 60 Years of the New York Convention: Key Issues and Future Challenges, (Kluwer Law International; Kluwer Law International 2019) pp. 169-184

9. **Pierre Lalive** - Transnational (or Truly International) Public Policy and International Arbitration, in Pieter Sanders (ed), Comparative Arbitration Practice and Public Policy in Arbitration, ICCA Congress Series, 1986 New York Volume 3 (Kluwer Law International; Kluwer Law International 1987) pp. 258-318

10. **Pierre Mayer and Audley William Sheppard** - Recommendations of the International Law Association on Public Policy as a Ground for Refusing Recognition or Enforcement of International Arbitral Awards: Presentation, in Albert Jan Van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2004 - Volume XXIX, Yearbook Commercial Arbitration, Volume 29 (Kluwer Law International, ICCA & Kluwer Law International 2004) pp. 339-345

11. **Stavros Brekoulakis** - Part I Cornerstones, Ch. 5 Transnational Public Policy in International Arbitration. From the Oxford Handbook of International Arbitration, Edited by Thomas Schultz, Federico Ortino. ISBN: 9780198796190, 2020

12. **Teubner, Gunther** - Global Bukowina: Legal Pluralism in the World-Society (1996). GLOBAL LAW WITHOUT A STATE, Gunther Teubner, ed., Dartmouth, pp. 3-28, 1996, Available at SSRN: <https://ssrn.com/abstract=896478>

13. **Богатина Юлия Геннадьевна** - Оговорка о публичном порядке в международном частном праве: теоретические проблемы и современная практика, ISBN 978-5-8354-0633-3. - Москва, Статут, 2010, 407с.

Bogatina Yulia - Public Policy Exception in the Private International Law: Theoretical Issues and Current Practice, ISBN 978-5-8354-0633-3. - Moscow, Statut, 2010, 407 pages

14. **Брун Михаил Исаакиевич** - Публичный порядок в международном частном праве, Петроград, 1916

Michail Isaakievitsj Broen - Public policy in the Private International Law, Petrograd, 1916

15. **Дмитриева Галина Кирилловна** - Международное частное право: учебник / отв. ред. Г.К. Дмитриева. - 4-е изд., перераб. и доп., ISBN 978-5-392-19535-0 - Москва: Проспект, 2016. - 680 с.

Dmitrieva Galina - Private International Law: Textbook / Executive Editor G.K. Dmitrieva. - 4th Edition, Revised and Supplemented, ISBN 978-5-392-19535-0 - Moscow: Prospect, 2016. - 680 pages

16. **Лебедев Сергей Николаевич, Кабатова Елена Витальевна** - Международное частное право: Учебник. В 2 т. Т. 1: Общая часть / Отв. ред. С.Н. Лебедев, Е.В. Кабатова, ISBN 978-5-8354-0767-5 (т. 1) (в пер.) ISBN 978-5-8354-0766-8. - М.: Статут, 2011. - 400 с.

Lebedev Sergey, Kabatova Elena - Private International Law: Textbook in 2 vol. Vol. 1: General Part / Executive Editors S.N. Lebedev, E.V. Kabatova, ISBN 978-5-8354-0767-5 (т. 1) (в пер.) ISBN 978-5-8354-0766-8. - М.: Statut, 2011. - 400 pages

17. **Левитин А.Б.** - Вопросы публичного порядка в международном частном праве // Проблемы международного частного права / Под ред. Л.А. Лунца. Москва, 1960

Levitin A.B. - Issues of Public Policy in the Private International Law // Issues of the Private International Law / Ed. by L.A. Lunts, Moscow, 1960

18. **Морозова Юлия Геннадьевна** - Оговорка о публичном порядке в международном частном праве: понятие и современный порядок применения. Диссертация - Москва, Российская академия государственной службы при президенте Российской Федерации, 2001

Morozova Yulia - Public policy exception in Private International Law: Concept and Modern application. Dissertation - Moscow, Russian Academy of Public Administration under the President of the Russian Federation, 2001

19. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք

20. «Առևտրային արբիտրաժի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-55-Ն օրենք

21. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք

22. «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» կոնվենցիա, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77867> հղումով, 25.11.2023թ. դրությամբ

23. Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64752> հղումով 28.11.2023թ. դրությամբ

24. Damian Sturzaker, 'TCL Air Conditioner (Zhongshan) Co Ltd v. Castel Electronics Pty Ltd [2014] FCAFC 83, Federal Court of Australia, New South Wales District Registry, VID 1042 of 2012, VID 1043 of 2012, VID 1044 of 2012, 16 July 2014', A contribution by the ITA Board of Reporters; Kluwer Law International

25. 'Luxembourg No. 1, Kersa Holding Company Luxembourg v. Infancourtage, Famajuk Investment and Isny, Cour Superieure de Justice [Court of Appeal], Not Indicated, 24 November 1993', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 1996 - Volume XXI, Yearbook Commercial Arbitration, Volume 21 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 1996), pp. 617 – 626

26. 'Italy No. 181, C.G. Impianti SpA (Italy) v. B.M.A.A.B. and Sons International Contracting Company WLL (Kuwait), Corte di Appello [Court of Appeal], Milan, Not Indicated, 29 April 2009', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2010 - Volume XXXV, Yearbook Commercial Arbitration, Volume 35 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2010), pp. 415 – 417

27. 'Germany No. 146, H v. F in liquidation, Higher Regional Court of Karlsruhe, Case No. 9 Sch 2/09, 4 January 2012 and Federal Court of Justice of Germany, Case No. III ZB 8/12, 20 December 2012', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2013 - Volume XXXVIII, Yearbook Commercial Arbitration, Volume 38 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2013), pp. 379 – 383

28. Richard Kreindler, 'BGH – III ZB 17/08, Federal Court of Justice of Germany, III ZB 17/08, 30 October 2008', A contribution by the ITA Board of Reporters; Kluwer Law International, տե՛ս <https://www.kluwerarbitration.com/document/ipn91359?q=international+public+policy> հղումով 25.11.2023թ. դրությամբ

29. 'France No. 42, PT Putrabali Adyamulia (Indonesia) v. Rena Holding, et al., Cour de Cassation [Supreme Court], First Civil Chamber, Not Indicated, 29 June 2007', in Albert Jan van den Berg (ed), ICCA Yearbook Commercial Arbitration 2007 -

Volume XXXII, Yearbook Commercial Arbitration, Volume 32 (© Kluwer Law International; ICCA & Kluwer Law International 2007), pp. 299 – 302

30. ICC Award No. 1110 of 1963 by Gunnar Lagergren, YCA 1996, at 47 et seq. (also published in: Arb.Int'l 1994, at 282 et seq.). Տե՛ս https://icsid.worldbank.org/sites/default/files/parties_publications/C3765/Respondent%27s%20Counter-Memorial/Pi%C3%A8ces%20juridiques/RL-0061.pdf հղումով 28.11.2023թ. դրությամբ

31. ICC Case N° 15300, Final Award in Case 15300 (Extract), 29 November 2023, տե՛ս <https://jsumundi-com.peacepalace.idm.oclc.org/en/document/decision/en-icc-case-ndeg-15300-final-award-in-case-15300-extract> հղումով 28.11.2023թ. դրությամբ

32. Erie Railroad Co. v. Tompkins, 304 U.S. 64 (1938), տե՛ս <https://supreme.justia.com/cases/federal/us/304/64/> հղումով 27.11.2023թ. դրությամբ

ВИДЫ ОГОВОРКИ О ПУБЛИЧНОМ ПОРЯДКЕ - НАЦИОНАЛЬНАЯ, МЕЖДУНАРОДНАЯ И НАДНАЦИОНАЛЬНАЯ: ОСОБЕННОСТИ ИХ ТЕОРЕТИЧЕСКОГО И ПРАКТИЧЕСКОГО ПРИМЕНЕНИЯ

Давид Гарибян

Аспирант кафедры Гражданского права ЕГУ

В условиях развития международных частных отношений увеличивается и количество случаев применения норм иностранного права. В таких условиях в правовом арсенале государств подчеркивается роль оговорки о публичном порядке, как средства защиты, когда иностранная норма противоречит фундаментальным ценностям общества данной страны. В связи с этим необходимо достаточное изучение данной правовой конструкции, в том числе различных ее видов, что может стать необходимой методологической основой при обращении к ней и ее применении.

В данном контексте целью работы является обсуждение национальных, международных и транснациональных видов оговорки о публичном порядке, в результате чего делаются выводы о пределах теоретического и практического применения всех упомянутых видов, что может быть положено в основу за правильное применение оговорки о публичном порядке в юридической практике. При этом делается ссылка на историю развития указанных видов оговорки о публичном порядке, предпосылки их возникновения, существующие теоретические подходы к ним, а также случаи практического применения, которые в совокупности дают возможность сформировать комплексное представление об этих видах оговорки о публичном порядке и сделать выводы об их практической необходимости.

TYPES OF PUBLIC POLICY EXCEPTION: NATIONAL, INTERNATIONAL AND SUPRANATIONAL: FEATURES OF THEIR THEORETICAL AND PRACTICAL APPLICATION

Davit Gharibyan

PHD Student at the YSU Chair of Civil Law

In this context, the purpose of this work is to discuss national, international and transnational types of public policy, as a result of which conclusions are drawn about the limits of theoretical and practical application of all mentioned types, which can be the basis for the proper application of the public policy exception within legal practice. In the context of the development of private international relations, the number of cases of applying the norms of foreign law is also increasing. In such conditions, the role of the exception of public policy is emphasized within legal arsenal of states as a means of protection when a foreign norm contradicts the fundamental values of the given country's society. In this regard, it is necessary to sufficiently study this legal mechanism, including its various types, which can become a necessary methodological basis when referring to it and applying it.

In this context, the purpose of this work is to discuss national, international and transnational types of public policy, as a result of which conclusions are drawn about the limits of theoretical and practical application of all mentioned types, which can be the basis for the proper application of the public policy exception within legal practice. At the same time, reference is made to the history of the development of the specified types of the exception of public policy, the prerequisites for their emergence, the existing theoretical approaches to them, as well as cases of practical application, which together make it possible to form a comprehensive understanding of these types of public policy exceptions and to draw conclusions about their practical necessity.

Բանալի բառեր - *հանրային կարգ, միջազգային մասնավոր իրավունք, վերապահում, ազգային, միջազգային, անդրազգային, իրավակարգ:*

Ключевые слова: *публичный порядок, международное частное право, оговорка, национальный, международный, транснациональный, правопорядок.*

Key words: *public policy, private international law, exception, national, international, transnational, legal order.*